ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի ընդունած բանաձևը լրացուցիչ հաստատումն է այն ակնհայտ իրողության, որ Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման խնդիրը լիովին ամփոփվում է միջազգային իրավունքի սահմաններում և այդ պատճառով վերաբերում է միջազգային պարտավորություններ ստանձնած բոլոր պետություններին։ Համամարդկային արժեքների վրա հիմնված արդի միջազգային քաղաքականությունը չի կարող անտարբեր անցնել ազգերի ինքնորոշման իրավունքի կոպիտ ոտնահարման փաստի կողքով, մանավանդ, երբ այն ուղղվում է հայ ժողովրդի դեմ կիրառվող բիրտ բռնությունների շարունակական շղթայով։ Սումգայիթյան եղեռնը, Բաքվի և Կիրովաբադի արյունալի դեպքերը, հայ բնակչության բռնի տեղահանումները, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակումը, ինչպես նաև խորհրդային բանակի կողմից հայ ժողովրդի դեմ ձեռնարկված ահաբեկչական գործողությունները դուրս են գալիս Խորհրդային Միության ներքին գործերի շրջանակից, հանդիսանալով ողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրության առարկան։

Ինչ վերաբերում է նշված բանաձևի առթիվ ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության հայտնած պաշտոնական բողոքին, ապա այն իր հերթին հաստատումն է մի այլ ակնհայտ իրողության, որ Խորհրդային Միությունը դեռևս հեռու է իրավական պետություն դառնալու և իր իսկ ընտանձնած միջազգային պարտավորությունները հարգելու մտքից։ Նման արձագանքն առնվազն արտառոց է մի պետության համար, որ հավակնում է Նամիբիայի, Նիկարագուայի, Պաղեստինի և այլ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պաշտպանի դերին, ուստի այն իրավացիորեն կասկած է հարուցում նաև այդ դերի անկեղծության նկատմամբ։ Մյուս կողմից, ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության պաշտոնական բողոքում փորձ է արվում մոլորության մեջ գցել միջազգային հասարակական կարծիքը՝ խեղաթյուրելով իրականությունը։ Այսպես, նշվում է, որ «ադրբեջանական և հայ ժողովուրդների ներկայացուցիչների, հանրապետական և կենտրոնական իշխանությունների կողմից ջանքեր են գործադրվում Լեռնային Ղարաբաղի լարված իրավիճակը կարգավորելու ուղղությամբ», մինչդեռ հայտնի է, որ ադրբեջանական և կենտրոնական իշխանությունները այդ ուղղությամբ կիրառում են միայն բռնության քաղաքականություն։ Կամ՝ «Լեռնային Ղարաբաղում արդեն ուրվագծվում են իրավիճակի կարգավորման միտումներ», մինչդեռ իրականում շարունակվում է մարզի լիակատար տնտեսական շրջափակումը՝ ուղեկցված ադրբեջանական կողմի հրահրիչ գործողություններով։

Այսպիսով, ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության բողոքը հանդիսանում է կենտրոնական իշխանությունների կողմից հայ ժողովրդի դեմ կիրառվող բռնի ուժի քաղաքականության տրամաբանական շարունակությունը. դրանով Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի տնտեսական շրջափակմանը այժմ պարզապես գումարվում է Ղարաբաղի խնդրի քաղաքական շրջափակումը։ Եթե ամերիկյան սենատի հանձնաժողովի որոշումը ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության բողոքում դիտվում է որպես միջամտություն Խորհրդային Միության ներքին գործերին, ապա այդ բողոքն իր հերթին հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սուվերեն իրավունքների և Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի կոպիտ ոտնահարում, քանի որ այն ոչ միայն չի արտահայտում հայ ժողովրդի կամքը, այլև լիովին հակասում է նրա ազգային շահերին։

ՀՀԾ-ի վարչությունը պահանջում է, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը իր առաջիկա նստաշրջանում անդրադառնա այս հարցին՝ ընդունելով այնպիսի որոշում, որը հետագայում բացառի ԽՍՀՄ արտաքին գործերի մինիստրության հայտարարությունները հայ ժողովրդի անունից։